


# Մանուկներու Սուրբ Գիրքը կը ներկայացնէ



## Այն մարդը, որ չէր խոնարհի

Written by: Edward Hughes  
Illustrated by: Jonathan Hay

Translated by: Most Rev. Prof. Varant Zareh Seropian  
Adapted by: Mary-Anne S.

Story 33 of 60

[www.M1914.org](http://www.M1914.org)

*Bible for Children, PO Box 3, Winnipeg, MB R3C 2G1 Canada*

License: You have the right to copy or print this story, as long as you do not sell it.

Հայերէն

Armenian

Նաբուգոդոնոսոր թագաւոր  
հսկայ ոսկիէ արծան մը  
կառուցեց: Գլուխէն մինչեւ  
ոտքը ոսկի էր: Թերեւս  
ան մոռցաւ երազը, որ  
Աստուած դրկեց զինք  
ըսելու, թէ իր ոսկիէ  
թագաւորութիւնը  
յաւիտեան չէ:



1

Թերեւս ան կարծեց, թէ  
եթէ լման ոսկիէ արծան  
մը շինէր այն ատեն  
Աստուծոյ խօսքը իր  
երազին մէջ  
չ'իրականանար:



2

Թագաւորին ծառաներէն մէկը կարդաց հրամանը ամէն ժողովուրդին




3

"... Բոլորդ պիտի երկրպագէք գետին ծռելով եւ պաշտէք այս ոսկիէ արձանը... եւ ով որ գետին չի ծռիր եւ չի պաշտեր, պիտի նետուի զօրաւոր եւ բոցաւոր կրակի մէջ":




4

Ամէն մարդ կատարեց ինչ որ թագաւորը հրամայեց բացի երեք մարդիկ: Այս մարդիկը հրեաներ էին: Անոնք Սեդրաք, Միսաք եւ Աբեղնագովն էին, Դանիելի ընկերները:




5

Կ'երեւայ, թէ Դանիելը հոն չէր այդ ժամանակ, որովհետեւ ինքն ալ անշուշտ պիտի մերժեր պաշտել մարդու ձեռքով շինուած արձան:



6

Թագաւորին խելացի մարդիկը կը նախանձէին Դանիելէն եւ իր ընկերներէն, որովհետեւ թագաւորը իրենց կը հաւնէր: Ուրեմն անոնք ըսին.



7

"Երեք մարդիկ կան, որոնց դուն իբր կառավարիչներ ընտրեցիր Բաբելոնի վրայ, Սեդրաք, Միսաք եւ Աբեղնագով: Այս մարդիկը օ՛հ, թագաւոր, քեզի չեն ենթարկուիր: Զու Աստուածներուդ չեն ծառայեր, ոչ ալ կը պաշտեն ոսկիէ արձանդ, որ դուն կառուցեցիր":



8

Նաբուգոդոնոսոր  
թագաւոր չպատճառեց  
այս մարդը, բայց ինք  
ըսաւ, որ ո՛րէւ մէկը,  
որ իր հրամանին  
չ'ենթարկուիր պիտի  
պատժուի:




9

Ան աղաչեց անոնց,  
որպէսզի միտքերնին  
փոխեն: "Եթէ  
չպաշտեք, պիտի  
նետուիք բոցաւոր  
կրակին մէջ եւ այրիք:  
Եւ ո՞ր աստուածը ձեզի  
պիտի կարենայ  
փրկել իմ ձեռքէս:"




10

Թագաւորը շատ մեծ սխալ մը կը գործեր: Ան  
ապրող Աստուծոյ դէմ մարտահրաւեր կ'ընէր: Երեք  
հրեայ մարդիկը գիտէին, թէ Աստուծոյ օրէնքին դէմ  
է արձան պաշտել:



11

Անոնք իրենց կեցուածքին վրայ մնացին,  
որովիւտեւ անոնք կը վստահէին Աստուծոյ,  
անոնք չէին վախնար թագաւորէն:



12

Այս երեք մարդիկը պատասխան մը ունէին  
թագաւորին: Անոնք ըսին. "Մեր Աստուածը, որուն  
մենք կը ծառայենք կարող է մեզ փրկել այդ  
բոցավառող կրակէն:



13

Բայց եթէ ոչ, թող որ դուն գիտնաս, ով թագաւոր, որ  
մենք քու աստուածներուդ ոչ կը ծառայենք եւ ոչ ալ  
կը պաշտենք ոսկիէ արձանը, որ դուն հիմնեցիր":



14


Նաբուգոդոնոսոր թագաւոր շատ բարկացաւ: Ան հրամայեց, որ փուռը եօթը անգամ աւելի տաքցեն: Տակաւին մարդիկը ծունկի չէին քար եւ խոնարհիր:



15


Թագաւորը հրամայեց իր բանակի հզօր մարդոց, որպէսզի կապեն Սեդրաք,

Միսաք եւ Աբեդնագովը եւ անոնց բոցաւոր կրակին մէջ նետեն:




16

Փուռը այդքան տաք էր, որ այն մարդիկը, որ նետեցին Սեդրաք, Միսաք եւ Աբեդնագով կրակին մէջ իրենք այրեցան սուկալի տաքէն:




17

Թագաւորը հեռուէն կը դիտեր: Ան տեսաւ երեք մարդիկը կը նետուին կրակին մէջ: Բայց այդ ամէն ինչ չէր, որ ան տեսաւ:




18

Նաբուգոդոնոսոր թագաւոր ապշեցաւ. "Մենք այս երեք մարդիկը կապուած կրակին մէջ չնետեցի՞ւք", ան հարցուց իր օգնականներուն:



19

"Այո", պատասխանեցին անոնք: Ան ըսաւ. "Նայեցէք, ես չորս մարդ կը տեսնեմ, որոնք ազատ են, եւ կրակին մէջտեղը կը գալեն, եւ անվնաս եւ չորրորդը կարծես Աստուծոյ Որդին է":



20

Բոցավառ կրակին դրան մօտենալով  
 թագաւորը պռռաց. "Սեդրաք,  
 Միսաք եւ Աբեդնագով,  
 Ամենաբարձ Աստուծոյ  
 ծառաները դուրս եկէք":



21

Ետքը Սեդրաք, Միսաք  
 եւ Աբեդնագով  
 դուրս եկան  
 սարսափելի  
 փուռէն:



22

Ամէն մարդ մօտերին եկաւ եւ քննեցին երեք  
 հրեաները: Անոնք տեսան, որ կրակը որեւէ մէկ  
 ուժ չունի գիրենք այրելու: Անոնց մազերը չէին  
 խանգարուած եւ անոնց հագուստները չէին այրած:  
 Մինչեւ իսկ այրուածքի հոտ չկար անոնց վրայ:



23

Երբ ան անդրադարձաւ ինչ պատահած էր,  
 թագաւոր Նաբուգոդոնոսոր շատ խելացի բան  
 մը ըրաւ: Ան աղօթեց եւ ըսաւ. "Օրհնեալ է  
 Սեդրաք, Միսաք եւ Աբեդնագովին Աստուածը,  
 որ իր հրեշտակը դրկեց փրկելու համար իր  
 ծառաները, որոնք  
 կը վստահին  
 իրեն":



24

Այն մարդը, որ չէր խոնարհի  
 Աստուծոյ խօսքէն պատմութիւն մը,  
 Սուրբ Գիրքը:

Կը գտնուի հետեւեալին մէջ

Դանիէլ 3

"Քու խօսքիդ մուտքը լոյս կը ցոլացնէ:"  
 Սաղմոս 119:130

Աստուած գիտէ, թէ շատ գէշ բաներ ըրած ենք, որոնք ինք  
 մեղք կը կոչէ: Մեղքին պատիժը մահն է, սակայն Աստուած  
 այնքան մեզ կը սիրէ, որ իր Որդին Յիսուսը մեզի դրկեց,  
 որպէսզի իսկի վրայ մեռնի եւ մեր մեղքերուն համար  
 պատժուի: Ետքը Յիսուս համբարձաւ եւ դրախտ՝ իր տունը  
 բարձրացաւ: Եթէ կը հաւատաս Յիսուսին եւ իրմէ կը  
 պահանջես որպէսզի ներք քեզի քու մեղքերուդ համար,  
 Ան կը ներէ: Ան կու գայ եւ մէջդ կը բնակի իսկ  
 դուն յաւիտեան իր հետ:

Եթէ կ'ուզես մեղքերդ ազատիլ, հետեւեալը ըսէ Աստուծոյ: Տէր  
 Աստուած ես կը հաւատամ, որ Յիսուս մահացաւ ինձի համար  
 եւ հիմա Ան անգամ մը եւս կ'ապրի: Կ'աղաչեմ, որ գաս իմ  
 կեանքիս մէջ եւ ներես բոլոր մեղքերս, որպէսզի կարենամ նոր  
 կեանք մը ապրիլ, եւ օր մը հետո՞ղ ըլլամ, յաւիտեան: Օգնէ ինձի  
 որպէսզի քեզի համար ապրիմ քու որդիիդ պէս: Ամէն:

Կարդայ Սուրբ գիրքը եւ ամէն օր Աստուծոյ հետ խօսիր:  
 Յովհաննու 3:16

